ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«--» ---------- 2021թ. N-- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14[3]-րդ հոդվածի 9-րդ և 12-րդ մասերով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 20.1 կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշումը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի մի շարք հասցեներում գտնվող թվով 5 պոմպակայանների և թվով 4 խորքային հորերի զբաղեցրած հողամասերը փոխադրել «էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» հողերի կատեգորիա՝ համաձայն հավելվածի:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակությունների կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով առաջարկվում է Երևան քաղաքի մի շարք հասցեներում գտնվող թվով 5 պոմպակայանների և թվով 4 խորքային հորերի զբաղեցրած հողամասերը փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա:

Նկատի ունենալով, որ ՀՀ հողային օրենսգրքի 6-րդ և 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պոմպակայանների զբաղեցրած հողամասերը նախատեսված են կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նշանակության հողամասերի կազմում, ապա խնդրի կարգավորման նպատակով անհրաժեշտություն է առաջացել քննարկվող հողամասերի նպատակային նշանակությունը սահմանել «Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» հողերի:

Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխության արդյունքում հնարավորություն կստեղծվի համապատասխանեցնել հողամասերի նպատակային նշանակությունները գործող օրենսդրության պահանջներին և իրականացնել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքներ:

Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը հավանության է արժանացել ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նիստում և վերջինիս կողմից 23.12.2020թ. տրվել է դրական եզրակացություն:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ մասերի՝ համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը և դրանց նախագծման առաջադրանքները համայնքի ղեկավարի ներկայացմամբ քննարկվում են միջգերատեսչական հանձնաժողովի նիստում և հաստատվում են համայնքի ավագանու կողմից՝ միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի ծախսերում և եկամուտներում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2021 թվականի ---- --ի
N-- -Ա որոշման

Պոմպակայաններ

Հ/Հ	Վարչական շրջան	Հասցե	Փաստացի մակերես /քմ/	Հողամասերի նպատակային նշանակությունները
1	Մալաթիա-Սեբաստիա	Երվանդ Օտյան փողոց	13.76	Բնակավայրերի
2	Շենգավիթ	Արշակունյաց և Շիրակի փող. հատման հարևանությամբ	17.75	Բնակավայրերի
3	Շենգավիթ	Եղ. Թադևոսյան փող. 65տ/ժ	82.53	Ջրային
4	Շենգավիթ	Ֆրունզեի փող., 6/3-60տ/ժ	8.51	Բնակավայրերի
5	Շենգավիթ	Արտաշատի խճուղի 60տ/ժ	1.6	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության

Խորքային հորեր

Հ/Հ	Վարչական շրջան	Հասցե	Փաստացի մակերես /քմ/	Հողամասերի նպատակային նշանակությունները
1	Շենգավիթ	Թադևոսյան փող. 3.8լ/վրկ	10.45	Բնակավայրերի
2	Շենգավիթ	Շիրակի փող., 2.8լ/վրկ	12.43	Բնակավայրերի
3	Մալաթիա-Սեբաստիա	Շերամի և Ռաֆֆու փող. հատման մասում 6.5լ/վրկ	1.56	Բնակավայրերի
4	Շենգավիթ	Արշակունյաց և Շիրակի փող. հատման հարևանությամբ	1,0	Բնակավայրերի

Պ ո մ պ ա կ ա յ ա ն ն ե ր				
Հ/Հ	**Վարչական շրջան**	**Հասցե**	**Փաստացի մակերես /քմ/**	**Ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի հողամասի գոտին**
1	Շենգավիթ	Երևանյան լիճ 65 տ/ժ	6.8	6-րդ
2	Շենգավիթ	Կարմիր բլուր 45 տ/ժ	10.2	7-րդ
3	Շենգավիթ	Կարմիր բլուր այգու մեջ	9.05	7-րդ
4	Շենգավիթ	Կոմիտասի անվան զբոսայգի 60 տ/ժ	38	3-րդ
5	Մալաթիա-Սեբաստիա	Մոնթե Մելքոնյան վերջնամաս	10.37	6-րդ
6	Մալաթիա-Սեբաստիա	Մոնթե Մելքոնյան սկզբնամաս	21.49	6-րդ
7	Մալաթիա-Սեբաստիա	Պ.Տիչինայի և Շերամի հատման մասում	22.68	7-րդ
8	Մալաթիա-Սեբաստիա	Հովնաթանի փողոց, այգու հարևանությամբ	30.17	7-րդ
9	Մալաթիա-Սեբաստիա	Բատիկյան և Իսրայել Օրու փողոց	25.6	6-րդ
10	Նուբարաշեն	Նուբարաշեն 9-րդ փողոց /կենտրոնական զբոսայգի/	3.13	9-րդ